ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2020 թվական թիվ 8 գյուղ Ազատան

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-004-0143-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,2000 ՀԵԿՏԱՐ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՊԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի ԹԻՎ 19 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 38-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Գայանե Աշոտի Ավետիսյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմանում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-004-0143-0001 կադաստրային ծածկագրով 0.2000 հեկտար էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունն օրինականացնելու և հողամասի նպատակային ու գործառնկան նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով:

2. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 8-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի վարչական սահմանում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 08-004-0143-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող

0,2000 հեկտար էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, տրանսպորտի գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 19 որոշումը:

3. Համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հողերի օտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ավագանու անդամներ՝

	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Գևորգ Աբրահամյան			
Ավետիս Դավթյան			
Կարապետ Ենգոյան			
Անդրանիկ Իկիլիկյան			
Վարդան Մկրտչյան			
Հմայակ Պողոսյան			

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ազատանի համայնքի ղեկավար՝ Վարդան Իկիլիկյան
24 հունվարի 2020 թվական
գյուղ Ազատան